



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025թ. №496

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 2-րդ մասով՝ հաշվի առնելով, որ Սպիտակի համայնքապետարանի կողմից հայտարարված՝ «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱԾԾՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցը՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, չի ստորագրել պայմանագիրը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 2-ի N 3 որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱԾԾՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ **որոշում եմ**.

1. «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



[Handwritten signature]

Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հունիսի 2
ք. Սպիտակ